

Ն Ա Դ Ս Օ Ն-ից

Զ. ԲԱՆՈՒՂԵԱՆՑԻ

Եթէ սիրում ես—պիտ' անվերջ տանջւես,
Յագեցնես սիրտըդ, ծարաւ ու ագահ,
Խեղդող գիշերներ կատաղած փընտռես,
Ծըծես շըրթունքից թոյնը դու անահ:
Ես չէի սիրում, աղօթում էի,
Այնպէս ջերմ, վրսեմ ես պաշտում էի...
Մի ցաւակցական բառ նորա բերնից—
Իստակ, անարատ, անկեղծ բերանից—
Ահա այն բոլորն, ինչ որ ես չոքած
Կամէի լրսել, ոտքերը գըրկած...
Ահա այն աղօթքն, որ ես դողալով
Շըշընջում էի ոսկի յոյսերով...:
Ես սիրում էի գուցէ մի ըստւեր...
Գուցէ երազ էր այդ քաղցրիկ ժամեր...
Գուցէ ցընորք էր... մի ցընորք անմեղ...
Գուցէ դա ամպ էր երևում այնտեղ...:
Բայց մէթէ բաղդըս կամէր ինձ ծաղրել...
Իմ սիրտըս կըրկին ալրել, փոթօթել
Նոր-նոր տանջանքով, մօտեցնել մահւան...
Հայհոյել, կեղտել ու թըքել վերան...:
Սակայն յոգնեցայ վաժաշոտ կեանքից,
Չանձրացայ վաղուց դատարի օրերից...
Ինձ դէպի առաջ մի միտք էր մըղում,
Եւ դա էր միայն ապրել յորդորում:
Այդ հպարտ միտքը դէպ' գեղեցկութեան
Վեհ իդէալի տաճարն սըրբազան,
Կանչում էր առաջ, ապրել պատւիրում,
Որ սիրեմ անվերջ, սիրեմ անդադրում...: